ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No _____L **«_____» _____ 2023 թ.**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԷՐԱԶՄՈՒՍ+ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՂՐՂԶՍՏԱՆՈՒՄ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՈՒԺԵՂԱՑՈՒՄ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ (GEOTAK) ՇՐՋԱՆԱԿՈՒՄ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ», «ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐՈՒՄ «ԻԴ.03.01 ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «Ե.23.06 ԳԵՈԴԵԶԻԱ, ՆԵՐԱՌՅԱԼ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱԴԱՍՏՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀԱՄԱՏԵՂ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Եվրոպական միության Էրազմուս+ ծրագրի շրջանակներում իրականացվող «Հայաստանում և Ղրղզստանում աշխարհագրական տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հետբուհական միջառարկայական կրթական ծրագրերի մշակում և հետազոտական կապերի ուժեղացում» No. 617695-EPP-1-2020-1-ES-EPPKA2-CBHE-JP դրամաշնորհային ծրագիրը (GeoTAK).

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Թույլատրել Եվրոպական միության էրազմուս+ ծրագրի շրջանակներում իրականացվող «Հայաստանում և Ղրղզստանում աշխարհագրական տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հետբուհական միջառարկայական կրթական ծրագրերի մշակում և հետազոտական կապերի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրի (GeoTAK) շրջանակում «Երևանի պետական համալսարան», «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» և «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամներին (այսուհետ՝ Բուհեր) «ԻԴ.03.01 Աշխարհագրություն» և «Ե.23.06 Գեոդեզիա, ներառյալ քարտեզագրություն

և կադաստր» մասնագիտություններով իրականացնել համատեղ հետբուհական փորձնական կրթական ծրագիր (այսուհետ՝ Ծրագիր)՝ կրեդիտների փոխադարձ ճանաչման պայմանով:

2. Ծրագիրն իրականացնել համաձայն Բուհերի միջև կնքված 2023 թվականի հունվարի 10-ի համագործակցության հուշագրի և 2023 թվականի փետրվարի 6-ի պայմանագրի դրույթների:

3. Դիմորդների ընդունելությունը և ուսուցումը, ինչպես նաև հայցորդության ձևակերպումն իրականացնել ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի N 238-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն:

4. Ասպիրանտուրա ընդունված դիմորդների հետ կնքել պայմանագիր՝ ՀՀ կառավարության 2007 թվականի ապրիլի 26-ի N 581-Ն որոշմանը համապատասխան:

5. Բուհերի ռեկտորներին՝ նախարարություն ներկայացնել հաշվետվություն.

1) տվյալ ուսումնական տարվա ընդունվածների վերաբերյալ (ընդունելության գործընթացի ավարտից հետո, մեկամսյա ժամկետում, ըստ մասնագիտությունների, ուսուցման ձևի՝ անվճար/ վճարովի),

2) Ծրագրի շրջանակում ընդունված ասպիրանտների և հայցորդների ուսումնառության վերաբերյալ (յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին):

Recoverable Signature

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169 **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**